ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՍԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ГЕГАРКУНИКСКАЯ ОБЛАСТЬ

МЭР ГОРОДА СЕВАНА

378610, ք.Սևան, Նաիրյան փ. 164
հեռ. 09-40-79-40, 2-43-23

378610,г.Севан, ул.Наирян 164
тел. 09-40-79-40, 2-43-23

«19» 11 2011թ.

№ 1/221

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ն.ՊՈՂՈՍՅԱՆԻՆ

Ուղարկվում է Սևան քաղաքային համայնքի ավագանու՝ 09.12.2011թ. թիվ 5 նիստի որոշումները:

Առդիր՝ թերթ: 81

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. Հ. ՄԱԼԽԱՍՅԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
13. 01 2012թ.
Մուտք թիվ 137-12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՍԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1501, Ք. ՍԵՎԱՆ, ՆԱԻՐՅԱՆ 164

Հեռ. 0261-2-63-44

Հարցման կարգով

27/10/2011թ. N 36

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՎՏՈԲՈՒՍԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ԱՆՎԱԴՈՂԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐԸ ՓՈԽՀԱՏՈՒՑԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ.՝ Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ /

Սևան համայնքից Երևանի ԲՈՒՀ-երում սովորող ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողներին Սևան-Երևան և Երևան-Սևան երթուղով վարձակալված ավտոբուսով տեղափոխումը կազմակերպելու նպատակով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Համաձայնել համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել անհրաժեշտության դեպքում փոխհատուցելու ուսանողական ավտոբուսի տեխնիկական սպասարկման և նոր անվադողերի ձեռքբերման ծախսերը:

<u>Ավագանու անդամներ՝</u>

Կողմ դեմ ձեռնպահ

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՍԱՄՍՈՆ
3. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
5. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՒՆԱՆ
6. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
7. ԴԱՎՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
8. ԷԼԻԶԲԱՐՅԱՆ ԱՐԱՄ
9. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԱԿԻՉ
10. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ
11. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
12. ՍՄԲԱՏՅԱՆ ԱՇՈՏ
13. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՍԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1501, Ք. ՍԵՎԱՆ, ՆԱԻՐՅԱՆ 164 Հեռ. 0261-2-63-44

09/12/2011թ N 37-Ն

## 2012Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ. ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ.՝ Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ /

Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի, ղեկավարվելով «ՏԻՄ» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Հաստատել համայնքի 2012թ. տեղական տուրքերի և վճարների հետևյալ տեսակներն ու դրույքաչափերը՝

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

### ՀԻՄՆԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 4500 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 9000 դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ,

բգ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 21000 դրամ.

### ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 900 դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների ( այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 900 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի

գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 1500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է

ա) ոգելից խմիչքի վաճառքի թույլատվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5000դրամ

բ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլատվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5000 դրամ

5. Համայնքի տարածքում

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ.

բ) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150 000 դրամ:

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար՝ 50000 դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 25 000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ:

8. Համաքաղաքային կանոններին համապատասխան համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլատվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանված է 0 դրամ

9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.

ե) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5000 դրամ:

11. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանվում է 0 դրամ:

12. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու, հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 5000դրամ

13. Տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար ՏԻՄ մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 0 դրամ:

14. ՏԻՄ կողմից մրցույթներ և աճուրդների հետ կապված մասնակիցների վճար 3000 դրամ:

## ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ՈՒ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի, «ՏԻՄ» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջների՝

1. Թույլատրել՝ վարձակալության հանձնելու
   - ✓ համայնքային սեփականության բնակելի տարածքները ՝
     Սահմանել տարեկան վարձավճար 1քմ ՝ - 200 դրամ:
   - ✓ համայնքային սեփականության ոչ բնակելի տարածքները :
     Սահմանել տարեկան վարձավճար 1քմ՝ - 1000 դրամ:
     Գագարինում սահմանել տարեկան վարձավճար 1քմ՝ - 200 դրամ:
   - ✓ համայնքային սեփականություն հանդիսացող արտադրական և նկուղային տարածքները՝
     Սահմանել տարեկան վարձավճար՝ 1 քմ - 200 դրամ:
2. 2012թ. համար համայնքի վարչական տարածքի սահմաններում սահմանել հողօգտագործման և կառուցապատման վճարների հետևյալ դրույքաչափերը՝

- Աբովյան փողոցից մինչև Շինարարների փողոցը ընկած Նաիրյան փողոցի վրա տեղադրվող օբյեկտների 1 քմ հողօգտագործման համար՝ կառուցապատման վճար տարեկան 400 դրամ.
- քաղաքի մնացած տարածքներում տեղադրվող օբյեկտների համար վճար 1քմ՝ տարեկան 300 դրամ.
- Ցամաքաբերդ և Գոմաձոր թաղամասերի, Գագարին գյուղի օբյեկտների համար՝ 1քմ-տարեկան 150 դրամ.
- ավտոլցակայանների համար՝ յուրաքանչյուր 1քմ հողատարածքի համար՝ տարեկան վճար 150 դրամ.
- ավտոտնակների համար՝ յուրաքանչյուր 1 քմ համար՝ տարեկան վճար 150 դրամ.
- բացօթյա սրճարաններ կազմակերպելու համար՝ 1քմ հողօգտագործման, կառուցապատման վճար՝ տարեկան 150 դրամ.
- գոյություն ունեցող հասարակական և արտադրական շինությունների սպասարկման համար տրամադրվող հողերի կառուցապատման վճար սահմանել 1 քմ համար տարեկան 30 դրամ.
- ավտոկայանատեղերի համար, յուրաքանչյուր 1 քմ համար՝ հողօգտագործման վճար սահմանել տարեկան 30 դրամ.
- գյուղատնտեսական շուկաներ կազմակերպելու համար հողօգտագործման վարձավճար 1 քմ հաշվով՝ տարեկան 120 դրամ.
- բացօթյա տոնավաճառներ կազմակերպելու համար հողօգտագործման վարձավճար 1 քմ համար տարեկան 100 դրամ.
- առափնյա հանգստի գոտիներ կազմակերպելու համար՝ տրամադրվող հողերի կառուցապատման վճար սահմանել 1 քմ-ի համար 12.5 - 90 դրամ՝ ըստ հողերի գոտիականության սխեմաների.
- գյուղատնտեսական հողերի օգտագործման վճարը սահմանել 1 քմ-ի համար հողի հարկի դրույքաչափին հավասարեցված վարձավճար / 1քմ-1.88 դրամ /:
- արտադրական օբյեկտների կառուցման համար տրամադրվող հողերի վճար սահմանել 1 քմ-ի համար մինչև 10- 30 դրամ, ըստ գոտիականության սխեմաների:

կանաչապատման, բարեկարգման նպատակով տրամադրված հողի 1քմ-ի համար վարձավճար սահմանել տարեկան 30 դրամ

3. Սահմանել, որ համայնքի ավագանու կողմից սույն որոշմամբ հաստատված հողօգտագործման վճարները համարվում են մրցույթի մեկնարկային գներ, ինչպես նաև առանց մրցույթի տրամադրման դեպքում՝ ուղղակի վարձակալության և կառուցապատման վճարներ :
4. Համայնքի տարածքում անշարժ գույքի հասցեավորման աշխատանքների ծառայության վճար 1000 դրամ:
5. Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրեսքի 16-րդ հոդվածի և ՀՀ Հողային օրենսգրքի պահանջներով՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 30 տոկոսի չափով՝ 372.6 դրամ, իսկ ուղղակի վաճառքի գին կադաստրային արժեքով-1242 դրամ:

<u>Ավագանու անդամներ՝</u>

Կողմ    դեմ    ձեռնպահ

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՍԱՄՍՈՆ
3. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
5. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՒՆԱՆ
6. ԴԱՎՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
7. ԷԼԻՋԲԱՐՅԱՆ ԱՐԱՄ
8. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԱԿԻՉ
9. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
11. ՍՄԲԱՏՅԱՆ ԱՇՈՏ
12. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՍԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1501, ք. ՍԵՎԱՆ, ՆԱԻՐՅԱՆ 164 Հեռ. 0261-2-63-44

09/12/2011թ. N 38-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ.՝ Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 54-րդ և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածների պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Համայնքի 2011թ. բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝

Վարչական բյուջե՝ ծախսեր

1. Համայնքի ղեկավարի աշխատակազմ / բաժին 01, խումբ 1, դաս 1, ծրագիր 5/ , ա/թ.
1.1 Հոդված 4111 / աշխատողների աշխատավարձ/՝ պակասեցնել 2000.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 41396.0 հազ. դրամ
1.2 Հոդված 4131 /սոցիալական ապահովագրության վճարներ/՝ պակասեցնել 600.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 8642.0 հազ. դրամ
1.3 Հոդված 4212 / էներգետիկ ծառայություններ/՝ ավելացնել 80.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 4080.0 հազ. դրամ
1.4 Հոդված 4214 / կապի ծառայկություններ/ պակասեցնել 435.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 5520.0 հազ. դրամ
1.5 Հոդված 4215 / ապահովագրական ծախսեր/ պակասեցնել 33.0 հ. դրամ, հաստատել տարեկան 0 հազ. դրամ
1.6 Հոդված 4221 / ներքին գործուղումներ/ , պակասեցնել 50.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 270.0 հազ. դրամ
1.7 Հոդված 4234 / տեղեկատվական ծառայություններ/ պակասեցնել 250.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 100.0 հազ. դրամ
1.8 Հոդված 4237 / ներկայացուցչական ծախսեր/՝ պակասեցնել 400.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 4600.0 հազ. դրամ
1.9 Հոդված 4241 / մասնագիտական ծառայություններ/ , պակասեցնել 12.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 0 հազ. դրամ
1.10 Հոդված 4261 / գրասենյակային պիտույքներ/, ավելացնել 400.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 1400.0 հազ. դրամ
1.11 Հոդված 4264 / տրանսպորտային նյութեր/ ավելացնել 400.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 4480.0 հազ. դրամ

2. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /բաժին 01, խումբ 6, դաս 1 /, ա/թ
2.1 Հոդված 4241 /անշարժ գույքի կադաստրի գծով ծախսեր/, պակասեցնել 100.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 400.0 հազ. դրամ
2.2 Հոդված 4823 / պարտադիր վճարներ/ պակասեցնել 315.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 135.0 հազ. դրամ
2.3 Հոդված 4239 / ընդհանուր բնույթի այլ ծառայությունների ձեռքբերում/` պակասեցնել 35.0. հազ. դրամ, հաստատել տարեկան 150.0 հազ. դրամ

3. Շրջակա միջավայրի պաշտպանություն, ա/թ աղբահանության հետ կապված ծախսեր / բաժին 05, խումբ 1, դաս 1 հոդված 4213/, պակասեցնել 900.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 41600.0 հազ. դրամ
4. Բնության պաշտպանություն` կանաչապատում / բաժին 05, խումբ 4, դաս 1, հոդված 4239/ պակասեցնել 225.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 4775.0 հազ. դրամ
5. Սպորտի գծով ծախսեր / բաժին 08, խումբ 1, դաս 1, հոդված 4221/ պակասեցնել 300.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 100.0 հազ. դրամ
6. Նվիրատվություններ ոչ կառավարական կազմակերպություններին` հասարակական կազմակերպություններին / բաժին 08, խումբ 4, դաս 2, հոդված 4819/ պակասեցնել 215.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 2216.0 հազ. դրամ
7. Կրթություն, որից
7.1 նախադպրոցական կրթություն, / բաժին 09, խումբ 1, դաս 1, հոդված 4511/, ա/թ
7.1.1 Սուբսիդիա թիվ 1 «Բողբոջ» մ/մ ՀՈԱԿ, ավելացնել 800.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 18500.0 հազ. դրամ
7.1.2 Սուբսիդիա թիվ 2 «Զարթոնք» մ/մ ՀՈԱԿ, ավելացնել 900.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 18700.0 հազ. դրամ
7.1.3 Սուբսիդիա թիվ 3 «Հեքիաթ»մ ՀՈԱԿ, ավելացնել 1000.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 24200.0 հազ. դրամ
7.1.4 Սուբսիդիա «Գազարինի» մ/մ ՀՈԱԿ, ավելացնել 800.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 10600.0 հազ. դրամ
7.2 Արտադպրոցական դաստիարակություն / բաժին 09, խումբ 5, դաս 1, հոդված 4511/, ա/թ
7.2.1 «Մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ, ավելացնել 630.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 22586.0 հազ. դրամ
7.2.2 «Արվեստի դպրոց» ՀՈԱԿ պակասեցնել 400.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 8419.0 հազ. դրամ

8. Հանգիստ, մշակույթ, կրոն, որից գրադարաններ, ա/թ
8.1 Սուբսիդիա «ԳԿՀ» ՀՈԱԿ / բաժին 8, խումբ 2, դաս 1, հոդված 4511/, պակասեցնել 700.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 11264.0 հազ. դրամ
8.2 Սուբսիդիա «Համայնքային մշակութային կենտրոն» ՀՈԱԿ /բաժին 08, խումբ 2, դաս 3, հոդված 4511/ ավելացնել 560.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 10000.0 հազ. դրամ

9. Կապիտալ դրամաշնորհ պետական ոչ առևտրային կազմակերպություններին / բաժին 09, խումբ 3, դաս 1, հոդված 4655/, ա/թ` «Սևանի Արհեստագործական ուսումնարան» ՊՈԱԿ, ավելացնել 400.0 հազ. դրամ , հաստատել տարեկան 400.0 հազ. դրամ

10. Սոցիալական հատուկ արտոնություններ, որից նպաստներ բյուջեից / բաժին 10, խումբ 7, դաս 1, հոդված 4729/ ավելացնել 1000.0 հ. դրամ, հաստատել տարեկան 17741.7 հ. դրամ
11. Վարչական սարքավորումների գնում/ բաժին01, խումբ 1, դաս 1, հոդված 5122/ , պակասեցնել 200.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 1100.0 հազ. դրամ
12. Ընդհանուր բնույթի գեոդեզիական քարտեզագրական / կոորդինատների տեղադրման / ծախսեր / բաժին 01, խումբ 6, դաս 1, հոդված 5133/ , ավելացնել 200.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 700.0 հազ. դրամ
13. Հաստատել համայնքի 2011թ. բյուջեի ճշտված թիվ 2,3,6 հատվածները:

<u>**Ավագանու անդամներ՝**</u>

Կողմ դեմ ձեռնպահ

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՍԱՄՍՈՆ
3. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
5. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՒՆԱՆ
6. ԴԱՎՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
7. ԵԼԻԶԲԱՐՅԱՆ ԱՐԱՄ
8. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԱԿԻՉ
9. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
11. ՍՄԲԱՏՅԱՆ ԱՇՈՏ
12. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՍԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1501, Ք. ՍԵՎԱՆ, ՆԱԻՐՅԱՆ 164 Հեռ. 0261-2-63-44

09/12/2011թ. N 39-Ա

ՍԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ.՝ Է. ՂԱԶԱՐՅԱՆ /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաստատել Սևան քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն N1 հավելվածի:
2. Հաստատել Սևան քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N2 հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է 2012թ. հունվարի 1-ից:

/ հավելվածները կցվում են /

<u>Ավագանու անդամներ՝</u>

| | Կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ | [signature] | | |
| 2. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՍԱՄՍՈՆ | [signature] | | |
| 3. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ | [signature] | | |
| 4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ | [signature] | | |
| 5. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՒՆԱՆ | [signature] | | |
| 6. ԴԱՎՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ | [signature] | | |
| 7. ԷԼԻԶԲԱՐՅԱՆ ԱՐԱՄ | [signature] | | |
| 8. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԱԿԻՉ | [signature] | | |
| 9. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ | [signature] | | |
| 10. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ | [signature] | | |
| 11. ՍՄԲԱՏՅԱՆ ԱՇՈՏ | | | |
| 12. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱ | [signature] | | |

Համայնքի ղեկավար [signature] / Գ. [illegible] /

Աշխատակազմի քարտուղար [signature] / Ա. [illegible] /

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՍԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1501, Ք. ՍԵՎԱՆ, ՆԱԻՐՅԱՆ 164 Հեռ. 0261-2-63-44

09/12/2011թ. N 40-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ.՝ Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ /

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի և «ՀՀ բյուջետային համակարգի մասին»ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի պահանջների,

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաստատել ՍԵՎԱՆ համայնքի 2012թ. բյուջեն՝

| | |
|---|---|
| - Վարչական բյուջեի եկամուտներ՝ | 414000.0 հազ. դրամ |
| - Վարչական բյուջեի ծախսեր | 414000.0 հազ. դրամ |
| -Դեֆիցիտը՝ /պակասուրդը)՝ | 0.0 հազ. դրամ |
| - Ֆոնդային բյուջեի եկամուտներ՝ | 130000.0 հազ. դրամ |
| - Ֆոնդային բյուջեի ծախսեր | 130000.0 հազ. դրամ |
| -Դեֆիցիտը՝ (պակասուրդը)՝ | 0.0 հազ. դրամ |
| ԸՆԴԱՄԵՆԸ | |
| ա ) եկամուտների գծով ՝ | 495000.0 հազ. դրամ |
| բ) ծախսերի գծով ՝ | 495000.0 հազ. դրամ. |
| գ) դեֆիցիտը (պակասուրդը)՝ | 0.0 հազ. դրամ: |

2. Հաստատել համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում ֆոնդային բյուջե ՝ 49000.0 հազ. դրամ
3. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի.
5. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի

6. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասորդը/՝ համաձայն հատված 4-ի
7. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի /պակասուրդի/ ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն հատված 5-ի
8. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի :
9. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝

   ա) թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգմամբ նախատեսված ծախսերի հոդվածների միջև,

   բ) սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 15 %-ը:

/ հատվածները կցվում են /

<u>Ավագանու անդամներ՝</u>

Կողմ դեմ ձեռնպահ

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՍԱՄՍՈՆ
3. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
5. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՒՆԱՆ
6. ԴԱՎՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
7. ԷԼԻԶԲԱՐՅԱՆ ԱՐԱՄ
8. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԱԿԻՉ
9. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
11. ՍՄԲԱՏՅԱՆ ԱՇՈՏ
12. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՍԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

1501, Ք. ՍԵՎԱՆ, ՆԱԻՐՅԱՆ 164 Հեռ. 0261-2-63-44

09/12/2011թ. N 41

## ՀԱՄԱՅՆՔԻ 2011թ. 9 ԱՄՍՎԱ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

/ ՁԵՎ, ՁԵՎ՝ Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ
Է. ՂԱԶԱՐՅԱՆ /

Համայնքի 2011թ. 9 ամսվա բյուջեի կատարումը ընթացել է հետևյալ ցուցանիշներով՝

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

Համայնքի 2011թ. 9 ամսում բյուջեի եկամուտների պլանը կատարվել է 87.7%-ով, 323.2 մլն. դրամ ճշտված պլանային եկամուտների դիմաց հավաքագրած և պետական բյուջեից հատկացված դոտացիան կազմել է 283.4 մլն. դրամ: Նախորդ՝ 2010թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ համայնքի բյուջեն գերակատարվել է 3.3 %-ով կամ ավել եկամուտները կազմել են 9.0 մլն. դրամ:
2010թ. 9 ամսվա բյուջեի վարչական մասը կատարվել է 95.7 %-ով / պլան 291.0 մլն. դրամ, փաստացի 278.4 մլն. դրամ /: 2010թ.նույն ժամանակաշրջանի համեմատ բյուջեի վարչական մասում ավել եկամուտները կազմել են 15.3 մլն. դրամ կամ վարչական բյուջեի եկամուտները 2010թ համեմատությամբ ավելացել են 5.8%: Վարչական բյուջեում սեփական եկամուտները կատարվել են 86.6%-ով / պլան 89.4 մլն. դրամ, փաստացի 77.4 մլն. դրամ /: Նախորդ՝ 2010թ.նույն ժամանակաշրջանի համեմատությամբ սեփական եկամուտները ավելացել են 32.7%-ով կամ սեփական եկամուտների հավաքագրումը գերակատարվել է 19.1 մլն. դրամի չափով:
2011թ. 9 ամսվա ֆոնդային բյուջեն կատարվել է 15.7 %-ով / պլան 32.2մլն. դրամ, փաստացի 5.1 մլն.դրամ/, 2010թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ֆոնդային բյուջեի եկամուտները պակասել են 6.3մլն. դրամ կամ 55.4%-ով:
Համայնքի 2011թ. 9 ամսվա բյուջեի եկամուտների կատարման ավելի մանրամասն տվյալները և համեմատականը 2010թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ բերված է թիվ 1 հավելվածում: Համայնքի 2011թ. 9 ամսվա ֆոնդային բյուջեի թերակատարման նման ցածր թերակատարումը պայմանավորված է հողի և հիմնական միջոցների օտարումների բացակայությամբ:

ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

Եկամուտների կատարման մակարդակից ելնելով՝ կատարվել է համայնքի 2011թ. 9 ամսվա բյուջեի ծախսերը: Համայնքի բյուջեի ծախսերը կատարվել է 77.3%-ով: 343.5 մլն.դրամ պլանային ծախսերի դիմաց փաստացի կատարվել է 265.5 մլն. դրամի ծախս կամ թերակատարումը կազմել է 78.0 մլն. դրամ:
Ըստ առանձին ոլորտների՝ համայնքի 2011թ. 9 ամսվա բյուջեի ծախսերը կատարվել են տարբեր տոկոսներով: Կրթության, մշակույթի ծախսերը ֆինանսավորվել են 8 ամսվա պահանջով, 9 ամսվա փոխարեն բացառությամբ սեպտեմբեր ամսվա: Գումարների բացակայության հետևանքով թվով 11 ՀՈԱԿ սեպտեմբեր ամսվա հասանելիք ֆինանսավորումը չեն ստացել, շուրջ 17.0 մլն. դրամի չափով: Վարչական բյուջեի ծախսերը ապահովվել է 87.6%-ով ( 300.7մլն. դրամ պլան, 260.3 մլն. դրամ փաստացի ծախս), թերակատարումը կազմել է 40.4 մլն. դրամ, այդ թվում 8.4 մլն. դրամ՝ ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ, 10.3 մլն.դրամ՝ կրթության և մշակույթի ծախսեր, 2.4 մլն.դրամ շրջակա միջավայրի պաշտպանություն, 1.2 մլն. դրամ սոցիալական այլ ծրագրերի գծով ծախսեր, 17.6 մլն. դրամ համայնքի բյուջեի պահուստային ֆոնդ և այլն :
2010թ. 9 ամսվա համեմատությամբ 2011թ. նույն ժամանակաշրջանի վարչական բյուջեի ծախսերը ավելին են կատարվել 0.5 մլն. դրամ կամ 0.2 %-ի չափով:

2011թ. 9 ամսվա համայնքի բյուջեի ֆոնդային մասի ծախսերը կատարվել է 41.5 %-ով / 94.4 մլն. դրամ պլան, 39.3 մլն. դրամ փաստացի ծախս /, նախորդ 2010թ. 9 ամսվա համեմատությամբ ֆոնդային բյուջեի գծով պակաս ծախսերը կազմել են 19.1 մլն. դրամ: Համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից 34.0 մլն. դրամի չափով ուղղվել է ֆոնդային բյուջե՝ կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով:

Համայնքի բյուջեի 2011թ. 9 ամսվա ծախսերը և համեմատականը 2010թ. 9 ամսվա նկատմամբ բերված է թիվ 2 հավելվածում:

Համայնքի 2010թ. 9 ամսվա բյուջեից վճարվել է 6.7 մլն. դրամի չափով ասֆալտապատման, փոսային նորոգում, 2.8 մլն. դրամի չափով անձրևաջրատար ցանցի հիմնանորոգում և ասֆալտապատում, 1.5 մլն. չափով Շահումյան փողոցի վրա գտնվող գերեզմանոցը ցանկապատի ծածկի համար, ձեռք է բերվել 0.6 մլն. դրամի չափով համակարգչային սարքավորումներ, թիվ 1 «Բոլբոջ» մ/մ ՀՈԱԿ շենքի տանիքի նորոգմանն է հատկացվել 8.9 մլն. դրամ: Կատարվել են նաև այլ ծրագրեր:

*ՊԱՐՏՔԵՐ*

Համայնքի 2011թ. բյուջեից վճարվել է 20.4 մլն. դրամի չափով փոսային հիմնանորոգման պարտք, 0.9 մլն. դրամի չափով քարտեզագրման և չափագրման պարտք և այլն:

Ղեկավարվելով «ՏԻՄ» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Ընդունել ի գիտություն համայնքի 2011թ. 9 ամսվա բյուջեի կատարման մասին հաղորդագրությունը:

<u>Ավագանու անդամներ՝</u>

| | Կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ | | | |
| 2. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՍԱՄՍՈՆ | | | |
| 3. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ | | | |
| 4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ | | | |
| 5. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՒՆԱՆ | | | |
| 6. ԴԱՎՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ | | | |
| 7. ԷԼԻԶԲԱՐՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 8. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԱԿԻՉ | | | |
| 9. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ | | | |
| 10. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ | | | |
| 11. ՍՄԲԱՏՅԱՆ ԱՇՈՏ | | | |
| 12. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱ | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՍԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1501, Ք. ՍԵՎԱՆ, ՆԱԻՐՅԱՆ 164 Հեռ. 0261-2-65-44

09/12/2011թ. N 42

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ.՝ Է. ՂԱԶԱՐՅԱՆ /

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի պահանջները՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Թույլատրել համայնքի 2011թ. բյուջեի «Ավագանու փոխհատուցման ծախսեր»-ի հաշվին / բաժին 01, խումբ 1, դաս 1, հոդված 4729 / համայնքի ավագանու ներքոհիշյալ անդամներին վճարելու ս / թ հունվար-դեկտեմբեր ամիսների համար կատարված ծախսերը՝

| | | |
|---|---|---|
| 1. | Անտոնյան Գուրգեն | - 51.500 դրամ |
| 2. | Առաքելյան Սամսոն | - 49.500 դրամ |
| 3. | Ավագյան Կամո | - 27.000 դրամ |
| 4. | Ավետիսյան Բագրատ | - 36.000 դրամ |
| 5. | Բաղդասարյան Հունան | - 27.000 դրամ |
| 6. | Գևորգյան Արայիկ | - 54.000 դրամ |
| 7. | Դավոյան Տիգրան | - 54.000 դրամ |
| 8. | Էլիզբարյան Արամ | - 27.000 դրամ |
| 9. | Համբարձումյան Մակիչ | - 54.000 դրամ |
| 10. | Սարգսյան Արսեն | - 54.000 դրամ |
| 11. | Սարգսյան Տիգրան | - 27.000 դրամ |
| 12. | Սմբատյան Աշոտ | - 27.000 դրամ |
| 13. | Վարդանյան Արա | - 45.000 դրամ |
| | Ընդամենը՝ | - 533.000 դրամ |

**Ավագանու անդամներ՝**

| | Կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ | | | |
| 2. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՍԱՄՍՈՆ | | | |
| 3. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ | | | |
| 4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ | | | |
| 5. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՒՆԱՆ | | | |
| 6. ԴԱՎՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ | | | |
| 7. ԷԼԻԶԲԱՐՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 8. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԱԿԻՉ | | | |
| 9. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ | | | |
| 10. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ | | | |
| 11. ՍՄԲԱՏՅԱՆ ԱՇՈՏ | | | |
| 12. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱ | | | |

Համայնքի ղեկավար [illegible]

Աշխատակազմի քարտուղար [illegible]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՍԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1501, Ք. ՍԵՎԱՆ, ՆԱԻՐՅԱՆ 164 Հեռ. 0261-2-63-44

09/12/2011թ. N 43

## ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ.՝ Է. ՂԱԶԱՐՅԱՆ/

Համաձայն «ՏԻՄ» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Համայնքի հատուկ ծրագրերի իրականացման նպատակով մասնավոր անձանց կողմից նվիրատվության կարգով տրամադրված ֆինանսական միջոցները որևէ առևտրային բանկում տեղադրելու համար միջնորդել համայնքի ղեկավարին՝ բացել արտաբյուջետային հաշիվ Քաունթերփարթ ինթրնեշնլի կողմից հայտարարված «ՏԻՄ» խրախուսման դրամաշնորհային ծրագիրն մասնակցելու համար:

<u>Ավագանու անդամներ՝</u> Կողմ դեմ ձեռնպահ

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՍԱՄՍՈՆ
3. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
5. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՒՆԱՆ
6. ԴԱՎՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
7. ԷԼԻԶԲԱՐՅԱՆ ԱՐԱՄ
8. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԱԿԻՉ
9. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
11. ՍՄԲԱՏՅԱՆ ԱՇՈՏ
12. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՍԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1501, Ք. ՍԵՎԱՆ, ՆԱԻՐՅԱՆ 164 Հեռ. 0261-2-63-44

09/12/2011թ. N 44

ՍՈՒՐԵՆ ԶԱՔԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏԻ ՏԱՐԱԾՔԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ.՝ Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ /

Համաձայն «ՏԻՄ» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջների՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Ս. Զաքարյանի անվան քաղաքային մշակույթի պալատի տարածքից թույլատրել վարձակալության տրամադրել ներքոհիշյալ կազմակերպություններին և քաղաքացիներին՝
   - ✓ Սպորտ դահլիճ - 315.0քմ
   - ✓ Հայ առաքելական եկեղեցու լսարան - 42.0քմ
   - ✓ «Երիտասարդական ակումբ» - 24.0քմ
   - ✓ Վետերանների խաղասենյակ - 24.0քմ
   - ✓ Հ.Իգիթյանի անվ. գեղագիտական կենտրոն - 242.0քմ
   - ✓ Պարի դահլիճ - 162.0 քմ
   - ✓ «Սուխնա-Սևան» համույթի ղեկավարի սենյակ - 12.0քմ
2. Վարձակալական տարածքների վարձավճարը յուրաքանչյուր քառակուսի մետրի համար սահմանել տարեկան 1000 դրամ :

<u>Ավագանու անդամներ՝</u> Կողմ դեմ ձեռնպահ

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՍԱՄՍՈՆ
3. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
5. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՒՍԱՆ
6. ԴԱՎՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
7. ԷԼԻԶԲԱՐՅԱՆ ԱՐԱՄ
8. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԱԿԻՉ
9. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
11. ՍՄԲԱՏՅԱՆ ԱՇՈՏ
12. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱ

Համայնքի ղեկավար / Գ. [illegible] /

Աշխատակազմի քարտուղար Ա. [illegible] / Ա. [illegible] /

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1501, Ք. ՍԵՎԱՆ, ՆԱԻՐՅԱՆ 164
Հեռ. 0261-2-63-44

09/12/2011թ. N 45

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ/ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ.՝ Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ «ՏԻՄ» օրենքի 16 հոդվածի 20-րդ կետի պահանջներով `

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Ներքոհիշյալ քաղաքացիներին / ցանկը կցվում է / անհատույց սեփականության իրավունքով տրամադրել / նվիրել / իրենց կողմից զբաղեցրած համայնքային սեփականություն հանդիսացող բնակարանները :
2. Որոշումն ուժի մեջ է բնակարանների անհատույց սեփականության / նվիրատվության / իրավունքով տրամադրման պայմանագրերի կնքումից և պետական գրանցում ստանալուց հետո:

<u>Ավագանու անդամներ՝</u>

| | Կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1 ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ | | | |
| 2. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՍԱՄՍՈՆ | | | |
| 3. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ | | | |
| 4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ | | | |
| 5. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՒՆԱՆ | | | |
| 6. ԴԱՎՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ | | | |
| 7. ԷԼԻԶԲԱՐՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 8. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԱԿԻՉ | | | |
| 9. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ | | | |
| 10. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ | | | |
| 11. ՍՄԲԱՏՅԱՆ ԱՇՈՏ | | | |
| 12. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱ | | | |

Համայնքի ղեկավար /Գ. Պետրոսյան/
Աշխատակազմի քարտուղար /Ա. [illegible]/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՍԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1501, Ք. ՍԵՎԱՆ, ՆԱԻՐՅԱՆ 164 Հեռ. 0261-2-63-44

09/12/2011թ. N 46

ՍԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ, ԶՈՀՎԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿԻ ՀԱՅՐ ՌԱՖԻԿ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ. Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ /

Հիմք ընդունելով ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 4-րդ ենթակետերը՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Համաձայն գլխավոր հատակագծի՝ Սևան քաղաքում անհատական բնակելի տուն կառուցելու համար նախատեսված 601քմ հողատարածքը սեփականության իրավունքով անհատույց հատկացնել Սևան քաղաքի Խաղաղության փողոցի թիվ 2 / 32 բնակարանի բնակիչ, զոհված ազատամարտիկի հայր Ռաֆիկ Մինասյանին:

<u>Ավագանու անդամներ՝</u>

Կողմ դեմ ձեռնպահ

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՍԱՄՍՈՆ
3. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
5. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՒՍԱՆ
6. ԴԱՎՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
7. ԷԼԻԶԲԱՐՅԱՆ ԱՐԱՄ
8. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԱԿԻՉ
9. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
11. ՍՄԲԱՏՅԱՆ ԱՇՈՏ
12. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱ

Համայնքի ղեկավար Գ. Ղազարյան
Աշխատակազմի քարտուղար Ա. Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՍԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1501, ք. ՍԵՎԱՆ, ՆԱԻՐՅԱՆ 164 Հեռ. 0261 2-63-44

09/12/2011թ. N47

## ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ՇԱՐՔ ԱՆՆՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ.՝ *Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ*/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

**09.12.2011թ.**

Համայնքի 2011թ. բյուջեով նախատեսված / բաժին 10, խումբ 7, դաս 1, հոդված 4729/ օգնությունների գումարից 675.0հազ. դրամ հատկացնել

1. Միլվա Հովհաննիսյան - 50.000 դրամ
2. Իրինա Կազարենկո - 10.000 դրամ
3. Անդրանիկ Մարգարյան - 40.000 դրամ
4. Նելլի Քոչարյան - 45.000 դրամ
5. Սեդա Հովհաննիսյան - 80.000 դրամ
6. Արամ Ներսիսյան - 50.000 դրամ
7. Համեստ Հախումյան - 30.000 դրամ
8. Էլիզա Վարդանյան - 50.000 դրամ

**Գործարանային 6 շենքի սանհանգույցի վերանորոգում**

9. Ջուլիետա Մինասյան - 35.000 դրամ
10. Նատալյա Կոհլովա - 35.000 դրամ

**Բուժման նպատակով**

11. Արևիկ Մկրտչյան - 40.000 դրամ
12. Էդուարդ Մկրտչյան - 50.000 դրամ
13. Նարինե Հովսեփյան - 100.000 դրամ
14. Աիդա Մկրտչյան - 30.000 դրամ
15. Ռոբերտ Ալեյան - 30.000 դրամ

**04.10.2011թ.**

Համայնքի 2011թ. բյուջեով նախատեսված / բաժին 10, խումբ 7, դաս 1, հոդված 4729 / օգնությունների գումարից 825.0 հազ. դրամ հատկացնել հետևյալ քաղաքացիներին՝

1. Լորետա Պողոսյան - 50.000 դրամ
2. Կարեն Աsիրյան - 5.000 դրամ
3. Գայանե Ասատրյան - 30.000 դրամ թաղման ծախս
4. Վալերիկ Ղազարյան - 100.000 դրամ
5. Հովակիմ Կարապետյան - 100.000 դրամ
6. Համիկ Խաչատրյան - 100.000 դրամ

Ուսման վարձերի մասնակի փոխհատուցում

7. Գառնիկ Առաքելյան - 80.000 դրամ

Բուժման նպատակով

8. Կամո Մկրտչյան - 30.000 դրամ
9. Աիդա Մկրտչյան - 20.000 դրամ
10. Անահիտ Հովհաննիսյան - 100.000 դրամ
11. Ալվարդ Հովսեփյան - 30.000 դրամ
12. Մարիա Խիտարովա - 10.000 դրամ
13. Անի Սիմոնյան - 50.000 դրամ
14. Գեղամ Աղամալյան - 20.000 դրամ

**Բնակարանի վերանորոգման նպատակով**

15. Սոֆիկ Ղազարյան - 20.000 դրամ տան վերանորոգում

**Գործարանային 6 շենքի սանհանգույցի վերանորոգում**

16. Սիլվա Ծատուրյան - 50.000 դրամ Գործ.6 վերանորոգում
17. Ժաննետա Խաչատրյան - 30.000 դրամ Գործ.6 վերանորոգում

**11.10.2011թ.**

Համայնքի 2011թ. բյուջեով նախատեսված / բաժին 10, խումբ 7, դաս 1, հոդված 4729 / օգնությունների գումարից 895.0 հազ. դրամ հատկացնել հետևյալ քաղաքացիներին՝

1. Գարրի Մելքումյան - 15.000 դրամ
2. Նվարդ Միլիտոնյան - 15.000 դրամ զոհվածի այրի
3. Գոհար Զաքարյան - 15.000 դրամ
4. Հերիքնազ Հարությունյան - 20.000 դրամ
5. Լիլիթ Մուրադյան - 20.000 դրամ
6. Դոնարա Գևորգյան - 15.000 դրամ
7. Անժելա Մուրադյան - 40.000 դրամ դազաղ
8. Հրավերդ Թուխիկյան - 15.000 դրամ
9. Գյուլվարդ Մարիտոսյան - 15.000 դրամ
10. Պալինա Կուդաշինա - 15.000 դրամ
11. Լուսինե Մկրտչյան - 30.000 դրամ
12. Արտուշ Առաքելյան - 55.000 դրամ
13. Անդրանիկ Սահակյան - 60.000 դրամ
14. Կարեն Ստեփանյան - 75.000 դրամ

**Բուժման նպատակով**

15. Էմմա Գասպարյան - 15.000 դրամ
16. Արեգնազ Կարապետյան - 20.000 դրամ
17. Երանուհի Պետրոսյան - 15.000 դրամ
18. Ռաֆիկ Սաղաթելյան - 20.000 դրամ
19. Ջավահիր Մկրտչյան - 15.000 դրամ
20. Մայրան Վարդանյան - 30.000 դրամ
21. Ստելլա Պետրոսյան - 15.000 դրամ
22. Լարիսա Սեմյոնովա 20.000 դրամ
23. Քիշմիշ Աղեկյան - 20.000 դրամ
24. Արթուր Սարգսյան - 80.000 դրամ
25. Սևակ Խաչատրյան - 45.000 դրամ
26. Արսեն Մանուկյան - 70.000 դրամ

Գագարին, Գայի 3 շենքի խմելու ջրի խողովակների վերանորոգում

27. Կարինե Խաչատրյան - 15.000 դրամ

**Տան վերանորոգման նպատակով**

28. Ռաֆիկ Մկրտչյան - 30.000 դրամ

**Գործարանային 6 շենքի սանհանգույցի վերանորոգում**

29. Մանյակ Գալստյան - 60.000 դրամ

**ՔԿԱԳ Սևանի տարածքային բաժնին՝ համակարգչային սարք**

30. Մանուշ Կիրակոսյան - 20.000 դրամ

**24.10.2011թ.**

Համայնքի 2011թ. բյուջեով նախատեսված / բաժին 10, խումբ 7, դաս 1, հոդված 4729 / օգնությունների գումարից 250.0 հազ. դրամ հատկացնել հետևյալ քաղաքացիներին՝

1. Անի Մկրտչյան - 40.000 դրամ
2. Անի Պողոսյան - 40.000 դրամ
3. Անահիտ Հովհաննիսյան - 50.000 դրամ
4. Ռիմա Քոլոզյան - 40.000 դրամ
5. Մանուր Չակալյան - 40.000 դրամ
6. Վիկտորյա Պետրոսյան - 30.000 դրամ
7. Ժաննա Մովսեսյան - 10.000 դրամ

**27.10.2011թ.**

Համայնքի 2011թ. բյուջեով նախատեսված / բաժին 10, խումբ 7, դաս 1, հոդված 4729/ օգնությունների գումարից 440.0հազ. դրամ հատկացնել

1. Լևոն Թորոսյան - 50.000 դրամ
2. Շահսանամ Թորոսյան - 40.000 դրամ
3. Լիլիկ Թադևոսյան - 25.000 դրամ
4. Նելլի Քալանթյան - 50.000 դրամ
5. Գոհար Ասլանյան - 15.000 դրամ
6. Կառլեն Խաչատրյան - 30 000 դրամ թաղման ծախս

**Գործարանային 6 շենքի սանհանգույցի վերանորոգում**

7. Վարդանուշ Հակոբյան - 60.000 դրամ
8. Սյուզաննա Մինասյան - 60.000 դրամ
9. Զոյա Նալբանդյան - 60.000 դրամ

**Բուժման նպատակով**

10. Արփինե Պալյան - 50.000 դրամ

**15.11.2011թ.**

Համայնքի 2011թ. բյուջեով նախատեսված / բաժին 10, խումբ 7, դաս 1, հոդված 4729/ օգնությունների գումարից 90.0հազ. դրամ հատկացնել

1. Վալյա Խաչատրյան - 60.000 դրամ
2. Աննա Նալբանդյան - 30.000 դրամ

**23.11.2011թ.**

Համայնքի 2011թ. բյուջեով նախատեսված / բաժին 10, խումբ 7, դաս 1, հոդված 4729/ օգնությունների գումարից 510.0հազ. դրամ հատկացնել

1. Մեսրոպ Գրիգորյան - 20.000 դրամ
2. Նելլի Սահակյան - 40.000 դրամ

3. Մայա Միքայելյան - 20.000 դրամ թաղման ծախս
4. Սևակ Խաչատրյան - 50.000 դրամ
5. Արտակ Պողոսյան - 55.000 դրամ
6. Արմեն Մովսիսյան - 40.000 դրամ

Բուժման նպատակով

7. Տիգրան Պողոսյան - 50.000 դրամ
8. Աղիբեկ Պողոսյան - 45.000 դրամ
9. Յուրիկ Գալստյան - 50.000 դրամ
10. Աշխեն Խաչիանյան - 50.000 դրամ

**Ուսման վարձերի մասնակի փոխհատուցում**

11. Հեղինե Ավետիսյան - 30.000 դրամ

<u>Ավագանու անդամներ՝</u>

Կողմ դեմ ձեռնպահ

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՍԱՄՍՈՆ
3. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
5. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՒՆԱՆ
6. [illegible]
7. ԴԱՎՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
8. ԷԼԻԶԲԱՐՅԱՆ ԱՐԱՄ
9. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԱԿԻՉ
10. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ
11. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
12. ՍՄԲԱՏՅԱՆ ԱՇՈՏ
13. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱ

[illegible]
[illegible]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՍԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1501, ք. ՍԵՎԱՆ, ՆԱԻՐՅԱՆ 164 Հեռ. 0261-2-63-44

09/12/2011թ. N 48

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ՇԱՐՔ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ. Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ /

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Զիջել ներքոհիշյալ քաղաքացիներին պատկանող փոխադրամիջոցների և շենք-շինությունների գույքահարկի պարտքերը / հարկ և տույժ /՝

**Փոխադրամիջոցներ** **զիջում**

- ✓ Վարազդատ Ավետիսյան -ՀՎՀՀ M0062443 - Ս.Սևանեցի 22 / 39 - ԶԻԼ ՄԱԶ 4502- 29.015 դրամ- 10.265 դրամ
- ✓ Սամսոն Առաքելյան -ՀՎՀՀ M0062524 - 5-րդ միկրո/թաղ. 10 / 6 - VAZ21074 - 11.531 դրամ- 11.531 դրամ
- ✓ Գոռ Խաչիկյան -ՀՎՀՀ M0061392-Գրիբոյեդով 8 / 24 - ՄԵՐՍԵԴԵՍ ԲԵՆՑ C200- 9.761 դրամ- 9.761 դրամ
- ✓ Մայիս Վարդանյան -ՀՎՀՀ 17304405 - Նաիրյան 39 - ԳԱԶ 24 - 76.021 դրամ- 76.021 դրամ
- ✓ Գևորգ Գևորգյան -ՀՎՀՀ M0060196 - Ս.Սևանեցի 24 / 10 - ՆԻՍՍԱՆ ARMADA- 136.149դրամ- 136.149 դրամ
- ✓ Արա Դորվանյան -ՀՎՀՀ M0061552 - Նաիրյան 120 - VAZ 21214 - 40.787 դրամ- 11.087 դրամ
- ✓ Վյաչեսլավ Սիդելնիկով -ՀՎՀՀ 17448617 - Ս.Նովա 22 / 14- Ս-2140 - 77.125 դրամ- 24.625 դրամ
- ✓ Հրաչյա Ղուկասյան -ՀՎՀՀ M0060900 -Գրիբոյեդով 2 / 21 - NISSAN-ALTIMA 2.5 - 196.817 դրամ- 41.057 դրամ

**Շինություններ**

| | | | |
|---|---|---|---|
| ✓ Տիգրան Մարգարյան | - ՀՎՀՀ M0062384 | - Ս.Սևանեցի 9 | - 46.924 դրամ - 46.924 դրամ |
| ✓ Խաչիկ Խաչատրյան | - ՀՎՀՀ M0061151 | - Նալբանդյան 25 / 1 | - 14.480 դրամ - 14.480 դրամ |
| ✓ Էմմա Սեդրակյան | - ՀՎՀՀ M0060923 | - Կ.Բանաևի 11 | - 41.209 դրամ - 41.209 դրամ |
| ✓ Արայիկ Գևորգյան | - ՀՎՀՀ M0060266 | - Շահումյան 12 / 1ա | - 101.706 դրամ - 31.676 դրամ |

2. Հանձնարարել համայնքի ղեկավարի աշխատակազմի առևտրի, սպասարկումների և բյուջեի եկամուտների գանձումների բաժնին / բաժնի պետի տեղակալ Ա. Հովսեփյան /՝ աշխատանքներն իրականացնել օրենքով սահմանված կարգով:

<u>Ավագանու անդամներ՝</u>

| | Կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ | [signature] | | |
| 2. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՍԱՄՍՈՆ | [signature] | | |
| 3. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ | [signature] | | |
| 4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ | [signature] | | |
| 5. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՎՆԱՆ | [signature] | | |
| 6. ԴԱՎՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ | [signature] | | |
| 7. ԷԼԻԶԲԱՐՅԱՆ ԱՐԱՄ | [signature] | | |
| 8. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԱԿԻՉ | [signature] | | |
| 9. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ | [signature] | | |
| 10. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ | [signature] | | |
| 11. ՍՄԲԱՏՅԱՆ ԱՇՈՏ | | | |
| 12. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱ | [signature] | | |

Համայնքի ղեկավար [signature] / Գ. [illegible] /

Աշխատակազմի քարտուղար [signature] / Ա. [illegible] /

# Համայնքի 2011թ.9 ամսվա բյուջեի եկամուտների կատարման և համեմատական վերլուծության ցուցանիշները

| | Եկամուտների անվանումը | 2011թ. 9 ամիս | | | 2010թ. 9 ամիս | | | 2011թ.9 ամսվա համեմատականը 2010թ.9 ամսվա նկատմամբ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | պլան | փաստացի | % | պլան | փաստացի | % | փաստացի | % |
| 1 | Հողի հարկ վարչ. տարածքում գտնվող հողերի համար | 7050.0 | 9258.7 | 131.3 | 5250.0 | 4664.8 | 88.9 | +4593.8 | 98.5 |
| 2 | Գույքահարկ համայնքի տարածքում գտնվող շենք-շինությունների համար | 21000.0 | 19655.2 | 93.6 | 21000.0 | 13116.0 | 62.5 | +6539.2 | 49.8 |
| 3 | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 31875.0 | 15792.5 | 49.5 | 24750.0 | 16061.1 | 64.9 | -268.2 | 1.6 |
| 4 | Տուրքեր,ընդամենը ա/թ | 8362.5 | 7932.8 | 94.8 | 7163.2 | 7248.3 | 101.2 | +684.5 | 9.4 |
| 5 | Տեղական տուրքեր | 4762.5 | 4313.9 | 90.6 | 4013.2 | 4041.9 | 100.7 | +272.0 | 6.7 |
| 6 | Ընդամենը ոչ հարկային եկամուտներ ա/թ | 21079.3 | 24755.9 | 115.7 | 25168.7 | 17237.3 | 68.5 | +7516.5 | 43.6 |
| 7 | Ընդամենը սեփական եկամուտներ | 89366.8 | 77395.1 | 86.6 | 83331.9 | 58327.5 | 70.0 | +19067.5 | 32.7 |
| 8 | Այլ եկամուտ / ՔԿԱԳ և անասնաբ./ | 2193.9 | 1557.2 | 71.0 | 2794.0 | 2367.6 | 84.7 | -810.4 | 34.2 |
| 9 | Պաշտոնական տրանսֆերտներ | 199418.7 | 199418.7 | 100.0 | 202086.4 | 202375.5 | 100.1 | -2956.8 | 1.5 |
| 10 | ԸՆԴԱՄԵՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ | 290979.4 | 278371.0 | 95.7 | 288212.3 | 263070.6 | 91.3 | +15300.4 | 5.8 |
| 11 | ԸՆԴԱՄԵՆԸ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ | 32247.4 | 5075.1 | 15.7 | 30193.2 | 11394.2 | 37.7 | -6319.1 | 55.4 |
| 12 | ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ | 323226.8 | 283446.1 | 87.7 | 318405.5 | 274464.8 | 86.2 | +8981.3 | 3.3 |

Հավելված 2

Համայնքի 2011թ. 9 ամսվա բյուջեի ծախսերի կատարման և համեմատական վերլուծության ցուցանիշները

| ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ | 2010թ. 9 ամիս | | | 2011թ. 9 ամիս | | | 2011թ 9 ամսվա համեմատականը 2010թ.9 ամսվա նկատմամբ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ճշտված պլան | փաստացի ծախս | % | ճշտված պլան | փաստացի ծախս | % | փաստացի հ. դ. /+;-/ | % |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | 67030.7 | 53943.2 | 80.5 | 66791.7 | 58391.5 | 87.4 | +4448.3 | 8.2 |
| Տնտեսական հարաբերություններ /անասն.պահ./ | 900.0 | 600.0 | 66.7 | 300.0 | - | - | | |
| Շրջակա միջավայրի պաշտպանություն՝ սան. մաքրում, ձնահեռացում | 42700.0 | 38505.0 | 90.2 | 40800.0 | 38373.2 | 94.0 | -131.8 | 0.4 |
| Բնակ շինար. և կոմունալ ծառայություններ | 750.0 | 379.5 | 50.6 | 600.0 | 347.6 | 57.9 | -31.9 | 8.4 |
| Կապիտալ դրամաշնորհ. ՀՄՆ «Սևանի Պոլիկլինիկա» ՓԲԸ | 14827.4 | 14827.4 | 100.0 | - | - | | | |
| Հանգիստ և մշակույթ | 19800.0 | 14561.0 | 73.5 | 21431.0 | 16813.0 | 78.4 | +2252.0 | 15.5 |
| Կրթություն | 106600.0 | 88189.0 | 82.7 | 104249.0 | 98584.4 | 94.6 | +10395.4 | 11.8 |
| Սոցիալական պաշտպանություն | 15000.0 | 5850.0 | 39.0 | 14881.2 | 13730.0 | 92.3 | +7880.0 | 2.3անգ |
| Համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդ | 45738.0 | 42912.3 | 93.8 | 51648.1 | 34044.0 | 65.9 | -8868.3 | 20.7 |
| ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ն/բ | 313346.1 | 259767.4 | 82.9 | 300701.0 | 260283.7 | 87.6 | +516.3 | 0.2 |
| Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում ֆոնդային բյուջեին | 44000.0 | 41982.3 | 95.4 | 51648.1 | 34044.0 | 65.9 | -7938.3 | 18.9 |
| ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ ԸՆԴԱՄԵՆԸ | 90822.3 | 58390.6 | 64.3 | 94448.1 | 39251.7 | 41.5 | -19138.9 | 32.8 |
| Գույքի սարքավ. ավտ. գն. կապ. ծերան., ցանկապատերի, ծաղկամանների, նստարանների գնում | 12700.0 | 9723.0 | 76.5 | 3935.0 | 3256.0 | 82.7 | -6467.0 | 66.5 |
| Ճանապարհային տնտեսություն | 46472.3 | 28993.5 | 62.4 | 52299.5 | 24344.4 | 46.5 | -4649.1 | 16.0 |
| Անձրևաջրատար ցանցի, դիտահորերի հիմ. աղբարկղ. տեղադր. և շրջ միջ.պաշտպ. | 24500.0 | 15254.1 | 62.3 | 6263.6 | 2763.6 | 44.1 | -12490.5 | 81.9 |
| Բազմաբնակ. շենքերի տանիքների հիմնանոր. և նախագծ. աշխատանքներ. | 7150.0 | 4420.0 | 61.8 | 17100.0 | - | | | |
| Մանկական խաղահրապ.կառուց. | | | | 1400.0 | | | | |
| Թիվ 1 «Բուբուշ» մ/մ շենքի տանիքի հիմն | | | | 134501.0 | 8887.7 | 66.1 | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍ | 360168.4 | 276175.7 | 76.7 | 343501.0 | 265491.4 | 77.3 | -10684.3 | 3.9 |